

«Աշոտ Քէչեան զարգացումով պիտի կըրնար արժէքաւոր երգիծարան մը ըլլալ:

«Լիլա չարժեր նկատի առնել:

«Լիլոյի զարգացումը պահսեցաւ:

«Սարգիս Մինասեան երգիծական շնորհ ունէր: 1914-ի վերջը եւ 1915-ի սկիզբը «Ազատամարտի»-ի մէջ գրած իր քրոնիկներուն մէջ կը նշմարուէր այդ շնորհը:

«Գուրեան Սրբազանի խօսակցութեան մէջ նուրբ երգիծանք մը կը պահուրտի:

**ԵՐԿՈՒ ՄԱՐԴ ԻՐ ՄԷՋ**

Ճիշդը խօսելու համար՝ երկու մարդ կ'ապրէր Օտեանի մէջ, երկու տարբեր ու իրարու հակօտնեայ մարդիկ: Իր երկերուն մէջ երեւան չի դար այդ երկուութիւնը. անոնց մէջ իր տիպարներն է որ կ'ապրեցնէ, ու ինքը կ'անցնի թեթեւ մը, կարծես կարմիր թելի մը մէջէն. երկուք էր ան կեանքի մէջ:

Նախ՝ անոր մէջ սկիզբովի դիժ մը կար, ու այդ է առհասարակ Օտեանի հետ չիտում ունեցող մարդոց կարծիքը: Ու արդարեւ Օտեանի հոգին առհասարակ գուրդ էր հաւատքի մը ջերմութենէն: Ան կարծես բանի մը չէր հաւատար, ոչ կրօնական ւեանդութեանց, ոչ զգացումներու խորունկութեան, ոչ ալ հոգին կազմող յուզումներուն: Ռընանն էր իր բարձի գիրքը, ու անոր աչքերով կը դիտէր Քրիստոսի ու կրօնքի վերաբերեալ բաները: Մ. Գիրքը կը կարդար սանսարտութեամբ, գիտնականի մը պէս: Ու դարմանալի է, որ այս մարդուն մէջ, չատ խորը, հաւատացեալ մը կ'ապրէր: Ճիշդ է, զայն ցոյց չէր տար մարդոց, ու կը զգուշանար զգացնելէ ալ: Բայց զինքը մօտէն պըր պըտողները դիւրաւ պիտի հանդիպէին այդ գիծին իր հոգիին մէջ: Սկիզբովի մարդուն աչքերուն մէջ երբեմն կ'ապրէր հաւատքի մը ջերմութիւնը: Մեռել մը կը յուզէր զինքը, ու իր միտքը կը բերէր գերազմանէն անդիինը:

Օտեանը ամէնքը ազատամիտ ճանչցան: Ու իրաւ ալ այդպէս էր: Ան կ'արհամարհէր բոլոր կարգերն ու ձեւերը. տաղտուկ կը զգար մարդոց ստեղծած բոլոր կապանքներէն, ու կ'ուզէր մարդկութիւնը ձերբազատուած տեսնել անոնցմէ: Ընկերային կարգերուն, բարոյականի պարտազրուութեանց դէմ էր, ու իր մտե-

րիմները, որոնք իր մէջ ճանչցած էին անկաշկանդ մարդու այդ դիժը, երգիծողի մտահոգութեան կը վերագրէին իր կամիթները, իր սլաքները հայ կեանքի մէջ ընկերային յեղաշրջում բերելու եկող յեղափոխականներու հասցէին:

Չարմանալի կը թուէր անոնց որ Օտեան, իր խորքին մէջ ազատամիտ մարդ, այդքան հեղնոտ ու կծու ըլլայ ոչ միայն մեր մէջ ազատ կրօն ու ազատ սէր քարոզող ծայրայեղներուն հանդէպ, այլ նաեւ ամենէն անմիջական, անյետաձգելի յեղաշրջումներու նկատմամբ ալ, որոնց հանդէպ համակրութեամբ կը խօսէր մտերիմ տեսակցութեանց պահուն: Ու պէտք կ'ըլլար եզրակացնել, թէ Օտեան յաճախ կը դրէր ապսպրանքով, «չափու վրայ», զինք հիւրընկալող թերթին տեսակէտներուն յարմարելով:

Ինչ ալ ըլլան իրեն հրապարակային արտայայտութեանց տուն տուող պատճառները, անտարակուսելի է որ Օտեանի մէջ կը բնակէր համոզումներով ազատամիտ մարդը:

Չարմանալին հոն է սակայն, որ Օտեանը քիչ մը աւելի խորէն փորփրելով դիւրին էր երեւան հանել նախապաշարեալը, եթէ ոչ ընկերային կարգերու մասին, գոնէ հոգեկան երեւոյթներու հանդէպ: Ան աւելորդապաշտ մըն էր, անոտի բաներէ զգածուող, հակառակ իր ծայրայեղ ազատամտութեան: Ան ալ իր Փէթիշները ունէր, իր դիւրահաւան, նախապաշարեալ վայրկեանները:

\* \* \*

Կար նաեւ Օտեանի դրականութեան մէջ առողջ, կենսուրախ, գուարթ ջիւղ մը: Ինք զաւեշտազիր մը չէր՝ ամբօխը խնդացնելու կոչուած. բայց լաւատեսութիւնը, պօսի իւմէօրսի էր իր տաղանդին հիմնական գիծը. չէր աշխատեր խնդացնել, ծիծաղեցնել ուրիշը, բայց ինքը կը խնդար կեանքին ու մարդոց վրայ: Զրուարթ ցոյց կուտար իր հոգին, ու երբեք չէր հանդիպեր, որ իր մէկ ցաւը պատմէ քեզի, ոչ գրած ոչ ալ խօսած ատենը:

Իր եռամեայ աքտորին մասին անգամ Օտեան չէր խօսեր կսկիծով, ոչ ալ կը գրէր: Եթէ աքտորէն դարձին «Անիծեալ Տարիները» գրեց «Ժամանակ»ի մէջ, աւելի ուրիշներուն ցաւը